

պատրաստում են Պարսկաստանի հայուհիք»⁽⁴⁰⁾։ Արդի գորգի ծանօթ առևտրականներուն համար գաղտնիք չէ որ լաւագոյն Լէյլէհաններ, Ճոշականներ, Գեշաններ եւ Սարուզներ (արդի) հայ հիւսողներու գործերն են⁽⁴¹⁾։

Պարսկաստան շինուած գորգերու հնագոյն վկայութիւնը որ ծանօթ է ինձի՝ Իպն Հաուզալէ գաս, վկայութիւնը անանուն Պարսիկ աշխարհագրի մը, Հուսուտ էլ-Ալամ, 982 թուականը կրող գործին մէջ։ Հոն կը վկայուի որ Ջահրումի մէջ կը շինուէին «գլխու եւ աղօթելու գորգեր, ինչպէս եւ Կիրան աղօթելու գորգեր»։ Ֆարսի մասին խօսելով կը յիշէ հոն շինուած «գլխու-գորգեր եւ կապերտներ (քիլիմ)» արժէքաւոր։ Սէյստանի գորգերուն համար կը վկայէ որ Դապարիստանի շինուածներուն նման են, ինչպէս նաեւ նման Ջահրումի (Ջէհրէմ) գլխու գորգերուն։ Իսկ Դապարիստանի գորգերուն մասին խօսած ատեն բնագիրը կու տայ «ճամա-հա-յֆը Փարշ(?)», (հարցական նշանը հրատարակիչէն)։ Արդ, պարսկերէն «ճամէ Ֆէրուշ» կը նշանակէ «հանդերձավաճառ», իսկ լիկ «ճամէ» զգեստ, հանդերձ, եւ այլն, թէեւ օթոց կամ որեւէ սփռուած բան ալ կը նշանակէ, հաւանարար նաեւ գորգ։ Դապարիստանի մէջ կը ծախուէին նաեւ Դապարի-գորգ կոչուած գորգերը։

Պարսկաստանի գորգերուն մասին հնագոյն Եւրոպացիի վկայութիւնը, ըստ իս, Վենետիկցի ուղեգիր Josafa Barbaroի կը պարտինք ժեզարու վերջերէն, ըստ որուն Եագա (Jex) քաղաքին մեծահամբաւ հիւսուածեղէններու կարգին էին նաեւ գորգերը։ Բետրոյ Թէլիք-աէրա, 1600-1605ին Պարսկաստանի մասին խօսած ատեն կը հաստատէ Եագտի գորգերուն Բորթուկալի մէջ ունեցած մեծ համբաւը, հոն ծանօթ իրը Տոտիալ, այսինքն «Եագտէն եկած»։ Ան կը յիշէ նաեւ Գիրման եւ Խորասան տեսակ գորգեր ալ⁽⁴²⁾։ Սըր Ճան Շարտին ալ կը յիշէ (1670) Գիրմանի եւ Սէյիստանի նշանաւոր գորգերուն մասին⁽⁴³⁾, ծանօթ մինչեւ մեր օրերը իրը հին ու յարգի գորգեր, այժմ անգլիւտ։

(40) Աշխարհ. Հայաստանի. — Աւետիք Տէր Յակոբեան, Թեֆլիզ, 1914, էջ 114։

(41) Հետաքրքրական է որ մեր օրերուն (1931) Թաւրիզի գորգերու արտածման մարտտան քննիչը հայ մըն էր, Յովհաննէս Խան։ Իսկ Թէհրանի մէջ կարեւոր պաշտօն ունէր գորգի պետական ճիւղին մէջ՝ ուրիշ հայ մը, Պր. Վարդան Եսայան։

(42) The Travels. — Hakluyt Society, Series II, Vol. IX, p. 217, 243

Թովմաս Հերպերդ կը վկայէ որ Գեշան 1627-29) կը գրիւէր կովկասեան մետաքս եւ անով գորգեր կը հիւսուէին (էջ 190)։ Իսկ այլուր կը տեղեկագրէ որ Գեշանի պարզ մետաքս, մետաքս եւ ոսկեթէլ եւ բուրդէ գորգերուն նման գորգեր՝ աշխարհի մէջ ուրիշ տեղ չկայ. (Travels. — London, 1677)։ 1812ին գեո ֆրէյլիան Խորասանի գորգերը շատ գեղեցիկ կը նկատէ։ (Letters from the Caucasus. — London, 1823, p. 348)։ Իսկ Ռուզբըր Լայեալ 1825էն թիչ առաջ իր այցելութեան ատեն ի Պարսկաստան, կը նկատէ որ Միսնայի մէջ ուղտի մտցէ նշանաւոր գորգեր կը շինեն, բազմատեսակ գեղեցիկ գոյներով. (Travels in Russia. — Russia. — London, 1825, Vol. II, p. 123).

(43) Travels in Persia, London, 1927, p. 278.